# Ուր է ուզում գնալ մեր գիտությունը

## Սա որոշելուց հետո մնացյալը լուծելի խնդիրներ են




ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ **Ֆադեյ Սարգսյանը**, որն իր կյանքի 47 տարիները նվիրել է հայրենի երկրին ու նրա գիտությանը, ի վերջո որոշեց հրաժարվել իր պաշտոնից՝ տեղը զիջելով ավելի երիտասարդ մեկին: Իր լիազորությունները դադարեցնելու մասին խնդրանքով 82-ամյա Ֆ. Սարգսյանը ապրիլի 3-ին դիմել էր ՀՀ վարչապետին:

Երեկ ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստում ՀՀ վարչապետ **Անդրանիկ Մարգարյանն** ասաց, որ կառավարությունը հարգել է բազմավաստակ գիտնականի ցանկությունը եւ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից՝ իր դիմումի համաձայն: ՀՀ ԳԱԱ պրեզիդենտի պաշտոնակատար է նշանակվել Սերգեյ Համբարձումյանը:

Ֆադեյ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահին, վարչապետին, գործընկերներին, որոնք օգնել են իրեն այս դժվար աշխատանքում: *«Ես կարծում եմ, որ ճիշտ քայլ եմ արել,*–ասաց նա,–*բայց թող գա ավելի երիտասարդը, որը կկարողանա ավելի լավ կազմակերպել գործը»:*

Ֆադեյ Սարգսյանը պաշտոնից հեռանում է՝ սրտում ոչ մի բան չունենալով որեւէ մեկի դեմ:

Շնորհակալություն հայտնելով Ֆ. Սարգսյանին համատեղ աշխատանքի համար, Ա. Մարգարյանը ԳԱԱ նախագահության անդամների հետ քննարկեց գիտությանն առնչվող մի շարք խնդիրներ, պատասխանեց նրանց հարցերին, խոստացավ հետագայում անդրադառնալ առաջարկություններին:

Վերջին շրջանում գիտնականներին, անշուշտ, նաեւ հասարակությանը հուզող հարցերից է ակադեմիային հասարակական կազմակերպության կարգավիճակ շնորհելու մասին պտտվող խոսակցությունները:

Վարչապետը հայտարարեց, որ կառավարությունն այդպիսի որոշում չի ընդունել եւ չի էլ ընդունելու, իսկ նման առաջարկությունները սովորաբար դրվում են քննարկումների՝ գիտնականների եւ ժողովրդի կարծիքն իմանալու համար: *«Ուրիշ խնդիր է, որ անհրաժեշտ է որոշակի բարեփոխումներ կատարել»,*–ասաց ՀՀ կառավարության ղեկավարը: Հատկապես այս պահին, երբ ակադեմիայի ղեկավարությունն է փոխվում, Ա. Մարգարյանի կարծիքով, պատեհ չէ նման հարցերի քննարկումը: Այնուհանդերձ, կան խնդիրներ, որոնց լուծումը վարչապետը հրատապ է համարում: Պարզապես ցանկացած խնդրի լուծում պետք է իր հիմնավորումն ունենա:

*Շարունակությունը՝ 3*

# Ուր է ուզում գնալ մեր գիտությունը

*Սկիզբը՝ էջ 1*

*«Այնպես չլինի, որ ես ցանկանում եմ ինստիտուտներ միացնել կամ տնօրեններ հանել: Այդպիսի խնդիր կառավարությունը չունի: Ինչ որ լինելու է ապագայում, միայն ձեր համաձայնությամբ է լինելու»*,–վստահեցրեց Ա. Մարգարյանը:

Փորձելով կանխել գիտնականների աշխատավարձի վերաբերյալ հարցը՝ վարչապետը հայտնեց, որ արդեն որոշակի մոտեցումներ կան 2007-08-09 թվականներին աշխատավարձերի բարձրացման, ֆինանսավորման ուղղությամբ:

Կառավարության ղեկավարը պատրաստակամ է հայագետների հետ քննարկել, այդ ոլորտին առնչվող հարցերը՝ որեւէ քայլ կատարելուց առաջ:

Պատասխանելով **Վ. Զաքարյանի**՝ ակադեմիկոսների ընտրություններ կատարելու մասին հարցին՝ վարչապետը դրանք կապեց նախագահի ընտրության հետ: 7 տարի ակադեմիայում նման ընտրություններ չեն կատարվել, մինչդեռ ավելի երիտասարդ գիտնականներին ասպարեզ տրամադրելու մասին խոսակցությունները շարունակվում են: Ամեն դեպքում միայն ակադեմիայի նախագահի ընտրությունից հետո կարելի կլինի խոսել ակադեմիկոսների ընտրության մասին:

Երիտասարդ կադրերի հարցը հուզում էր նաեւ **Լ. Աղալովյանին**: Ակադեմիան ինքն իր պատրաստած կադրերին աշխատանքի ընդունել չի կարողանում, որովհետեւ ոչ ոք չի ուզում աշխատել 20-25 հազար դրամով: Ի պատասխան՝ վարչապետը նշեց բուհական եւ ետբուհական կրթության մասին օրենքում փոփոխության անհրաժեշտության մասին՝ պետպատվերով ասպիրանտուրայում սովորողների հետ երեք տարով պայմանագիր կնքելու վերաբերյալ: Իհարկե, բարձր աշխատավարձով: Ա. Մարգարյանը հիշեցրեց, որ գիտական հիմնարկներին տրված է հնարավորություն՝ իրենց արտադրանքը իրացնելու եւ միջոցներ ստեղծելու: Իհարկե, դա չի վերաբերում հայագիտությանը:



Հայ գիտնականները կառավարությունից ակնկալում էին ծրագրեր՝ ինստիտուտների գիտական սարքավորումները թարմացնելու նպատակով: Նշեց, որ դրանց 82 տոկոսը մաշվել է եւ բարոյապես, եւ ֆիզիկապես, իսկ միջազգային կազմակերպություններից ստացված դրամաշնորհները վերջին տարիներին նոր սարքավորումներ ձեռք բերելու միակ ճանապարհն են եղել:

*«Կառավարությունը կարող է միջոցներ տրամադրել,*–ասաց ՀՀ վարչապետը,–*բայց մենք պետք է հասկանանք, թե այդ միջոցները տրամադրելով ինչ խնդիր ենք լուծում»*:

«Գեղեցիկ աչքերի համար» կառավարությունը միայն հայագիտությանն ու հիմնարար գիտություններին կարող է միջոցներ տալ, իսկ մյուսները պետք է հիմնավորեն, թե ներդրումն ինչ արդյունք է տալու:

**Վիլեն Հակոբյանը** առաջարկեց ակադեմիայի կառուցվածքում ընդգրկել նաեւ դրանից դուրս գտնվող գիտահետազոտական եւ նախագծային ինստիտուտները:

Գիտական բոլոր ուղղություններով մանրամասն մոնիտորինգ անցկացնելու առաջարկություն արեց **Ռադիկ Մարտիրոսյանը**՝ պարզելու համար, թե որոնք են այն ուղղությունները, որոնք մրցունակ են համաշխարհային գիտության տեսանկյունից: Եվ ըստ այդմ էլ՝ որոշել յուրաքանչյուր ճյուղին տրվող գումարի չափը:

Անդրանիկ Մարգարյանը գտնում է, որ բարձրացված հարցերի մի մասին կարելի է պարզապես լուծում տալ, որոշ հարցեր էլ պետք է քննարկել: *«Բոլորի մոտ էլ նույն մտահոգությունը տեսա,*–ասաց վարչապետը:–*Իրոք, հարկավոր է ճշգրտել ստրատեգիան. ուր ենք գնում, ինչ ենք անում: Մնացածը լուծելի խնդիրներ են: Իսկ ուր գնալու միջոցներ միշտ էլ հնարավոր կլինի գտնել»*:

Գիտության ոլորտում սկսված բարեփոխումները արդյունավետ կլինեն, եթե դրանք իրականացվեն շղթայի բոլոր օղակներում: Սա Ա. Մարգարյանի տեսակետն է, որը բարեփոխումների շղթայում կարեւորում է սահուն անցումը հիմնարար գիտություններից կիրառական գիտությունների զարգացմանը:

*«Խնդիրն այս է. գիտությունն ինչ ուղղությամբ զարգացնենք, որ տնտեսությունը զարգանա»*,–ասաց վարչապետը:

*Անուշ ՍԱՄՎԵԼՅԱՆ*